Հայաստանի Ուսանողական Ազգային Ասոցիացիա

*Հայեցակարգային փաստաթուղթ*
*ՀՓ 06-2012 առ 20.11.2012*

# «ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ»

Երևան 2012

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության ավանդական համակարգում ուսուցման ծրագրերը, դասընթացները և մոդուլները, դասավանդման մեթոդները մշակվել են գերազանցապես դասախոսների տեսանկյունից ելնելով: Ուստի ոչ միշտ է պարզ լինում, թե որոնք են ուսանողների ակնկալիքներն ու նպատակները դասընթացներից: Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան կոչ է անում անցնել ուսանողակենտրոն կրթական համակարգին, որտեղ ուշադրության կենտրոնում են ուսանողի պատկերացումները, ակնկալիքներն ու նպատակներն այս կամ այն դասընթացի, դասավանդման մեթոդի համար: Սույն փաստաթղթով Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան ամրագրում է իր տեսլականը ուսանողակենտրոն կրթական համակարգի վերաբերյալ:

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: *www.ansa.am*, e-mail: *secretariat.ansa@gmail.com*

## ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ուսումը մի գործընթաց է, որի ժամանակ ուսանողը ստանում է գիտելիքներ և հմտություններ, զարգացնում է վերաբերմունք, արժեքներ և հետագա իրավասություններ: Ուսումը իրականացվում է տարբեր համատեքստերում, որոնցից ամենատարածվածն ավանդական ուսանող-դասախոս համակարգն է, ինչպես նաև ուսուցումը բազմազան առօրյա իրավիճակներում: Ուսումը կարող է տեղի ունենալ ինչպես գիտակցաբար, այնպես էլ անգիտակցաբար և կարող է դասակարգվել տարբեր կերպ.

- **Ֆորմալ ուսուցումը** տեղի է ունենում կազմակերպված և համակարգված միջավայրում, հստակ սահմանված է որպես ուսուցում: Ֆորմալ ուսուցումը չի դիտարկում ուսանողի տեսակետը և որպես կանոն ավարտվում է դիպլոմավորմամբ:
- **Ոչ ֆորմալ ուսուցումը** առօրյա գործունեության արդյունք է՝ կապված աշխատանքի, ընտանիքի և հանգստի հետ: Այն կառուցված, համակարգված չէ ժամանակային, նպատակային կամ կրթական սահմանափակումներից ելնելով, շատ դեպքերում կանխամտածված չէ: Սովորաբար այն չի ավարտվում դիպլոմավորմամբ:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. ՀԱՐԱՑՈՒՅՑ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆԸ

Ուսանողակենտրոն համակարգը ձևավորվում է ուսումնական արդյունքների հայեցակարգային հիմքի վրա: ՀՈՒԱՄ-ի համոզմամբ հարացույց փոփոխության համար հիմնական նպատակը ուսումնական արդյունքների հստակ տեխնիկական նկարագիրն է,

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: www.ansa.am, e-mail: secretariat.ansa@gmail.com

ավելին, անհրաժեշտ է այնպիսի փոփոխություն, որը թույլ կտա սևեռվել դասավանդման և ուսումնառության մշակույթի վրա:

## ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՐԱՏԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՈՒԱԱ-ն վերահաստատում է իր օժանդակությունը կապված կրեդիտային համակարգի վրա հիմնված ուսուցման արդյունքների հետ: Եվրոպայի՝ կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգը պետք է դառնա բոլոր ուսուցման ծրագրերի հիմքը: ՀՈՒԱԱ-ի կարծիքով համակարգի լիարժեք և ամբողջական ներդրումն ունի կառավարության և բուհերի օժանդակության կարիք:

ՀՈՒԱԱ-ն համոզված է, որ կրեդիտային համակարգի սկզբունքների լիարժեք ներդրումը կիրառելի է ոչ միայն բուհերում, այլև բոլոր կրթական հաստատություններում:

## ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԼԱՅՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՈՒԱԱ-ն վերահաստատում է իր օժանդակությունը որակավորումների զարգացման գործում: Ազգային և եվրոպական որակավորման համակարգերը պետք է թույլ տան իրականացնել տարբեր մակարդակի որակավորումներ՝ միասնական տեղեկատվական համակարգի հիման վրա՝ ունենալով ուսանողների ուսուցման արդյունքների և կրեդիտների վերաբերյալ տեղեկություն: *Ներքին և արտաքին որակավորումների հավաստիացման միջոցները պետք է հաստատեն կրթական ծրագրի նկարագրված ուսուցման հետևանքները:* ՀՈՒԱԱ-ն պնդում է, որ ազգային որակավորման համակարգերը պետք է ձևավորեն նոր, ոչ ավանդական ուղիներ՝ բարձրագույն կրթության համակարգ մուտք գործելու համար: Կառավարությունը պետք է քաջալերի ուսանողներին ընդգրկվել ոչ ավանդական կրթական համակարգերում:

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.

Նոր կրթական ծրագրերը կարող են նաև պահանջել ընդունելության քննություն/որակավորում այս կամ այն առարկայից կամ մասնագիտական ոլորտից:

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: *www.ansa.am*, e-mail: *secretariat.ansa@gmail.com*